



## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՎԵՇԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

 ոկտիմբերի 13-ին, կիրակի օր, Մայր Արոռ Ս. էջմիածնում, խանդավառ մքնոլորտում, սրտագին ուրախուրյան մեջ և մեծազուր համայնքուրյամբ տոնվեց նորին Ս. Օծուրյուն Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Սրբազնագոյն Կարողիկոսի գահակալության երկրորդ տարեդարձը:

Համազգային ուրախուրյան այդ մեծ տոնին ներկա էին Համայն Վրաստաճի Պատրիարք-Կարողիկոս նորին Սրբություն Մելքիսեդէկ Գ-ը Իր շքամբով, Մոսկվայի և Համայն Ռուսին Պատրիարք նորին Սրբություն Ալեքսիի ներկայացնուիցից, Աստրախանի և Ստալինգրադի եպիսկոպոս նորին Սրբազնություն Սերգեյի:

Վեհափառ Հայրապետի գահակալության երկրորդ տարեդարձի հաճդիսուրյուններին մասնակցելու համար Մայր Արոռ էին ժամանել Հարավային Ամերիկայի հայոց Հայրապետական նվիրակ և Գերազուն Հոգենոր Խորհրդի անդամ գերաշնորհ Տ. Մին արեալիկոս Սահուկյանը, Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևելյան բեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբէր արեալիկոսովուն Գալֆայանը, Երևանի Պատրիարքուրյան ներկայացնուիցիներ գերաշնորհ Տ. Հայկագոյն եպիսկոպոս Արքահամայնքը և հոգեչնորհ Տ. Ասողիկ ծայրագույն Վարդապետ Հազարյանը և այլ պաշտոնական անձնավորություններ:

Վեհափառ Հայրապետի գահակալության երշակիկ և ուրախ առիրով մեր բոյոր եկեղեցիներում կատարվեցին հայրապետական մալրանքներ՝ Մայր Արոռ Ս. էջմիածնի անսասանուրյան ու հավերժուրյան և Վեհա-

փառ Հայրապետի բանկագին կինաց արեալատուրյան համար:

Հոկտիմբերի 13-ին, հայրապետական գահակալության այս բարեբաստիկ տոնի առիկ, բովանդակ հայության սիրտն ու զգացմունքները մի անգամ և չերմացան Ս. էջմիածնի անունով ու խորհրդով և Վեհափառ Հայրապետի անվան ու գործունեության հմայքով: Մի անգամ և ցնծագին ու տոնական հնչեցին Մայր Արոռի զանգերը և ցընծուրյան ալիքներով ավետեցին ի սփյուռս աշխարհի ցրված հայ հավատացյալ ժողովրդին ի միջիբարություն և ի խնդուրյուն, թե կենդանի է Մայր Արոռ Ս. էջմիածնը և այնտեղ աշխատում, տնեում և աղորում է Խոր Վիրապի մեծ նգեղողի հոգով և հավատով, Ս. Մեսրոպի և Նարեկացու տեսիլիքով ու շնչով՝ Ամենայն Հայոց ազգբնտիր Վեհափառ Հայրապետը՝ նորին Ս. Օծուրյուն Տ. Տ. Վազգեն Ա-ը, պայծառացնելու համար մեր օերուն էլ հայ ժողովրդի հավատավոր հոգին և կյանք տալու Ս. էջմիածնի հազարամյա բարեկրին:

Այս մտածմունքներն ու զգացմունքները վերստին կյանք են առնում յուրաքանչյուր հայ հավատավոր ու հայրենասեր մարդու հոգում Վեհափառ Հայրապետի գահակալության երշակիկ տարեդարձի առիկ, ուրախուրյան շինչ զգացմունքով գեղեցկացած և պայծառացած:

Նորին Ս. Օծուրյուն Վեհափառ Հայրապետը արժանավոր շառավիղն է հանդիսանում մեր պատմության երանաշնորհ և մեծ այն հայրապետական երերից, որոնք կուսակրցի օրերից մինչև մեր օերը բար առ բար, կամար առ կամար շինել են ու բարձրացրել Ս. էջմիա-

ծիբը գաւերի խորքից՝ որպես պատզամ ու ապրում, որպես խորհուրդ՝ ու գիտակցություն, որպես մեր հավատի ու ժողովրդի հավերժության խորհրդանշան:

Մեր սուրբ հայրապետները մեծ են եղել ու լուսավոր նիշատակ քողել՝ մեր ազգային-էկեղեցական տարեգրուրյան մեջ և նայ ժողովրդի երախտագետ սրբում այն շափով, ինչ շափով երանք ապրել են ու ստեղծագործել Ս. Էջմիածնի համար, Հայ Ազգի սիրով ու ծառայության ոգով: Եվ Վազգեն Ա. Վեհափառ Հայրապետը մեր ազգական ու զնարերվող հայրապետներից մեկն է, որ իր անունն ու կյանքը անխօսելիորեն կապել է Մայր Արոռ Ս. Էջմիածնի պայծառության հետ, հայ ժողովրդին ծառալելու անհամանը ուխտով:

Վեհափառ Հայրապետի բնարությունից ու գաբակալությունից անցել է ընթամենք երկու տարի, բայց այդ կարեն ժամանակամիջոցում էլ կատարվեցին «գործք արութեան արժանի գործ յիշատակութեան»:

Վեհափառ Հայրապետի գաբակալության երկրորդ տարին անցավ շինարարական, կազմակերպչական, վաճական-վաշշական, նոգեար-կրթական, ազգային-եկեղեցական թեղմնավոր ու խանդակառ իրագործումներով:

Անցնող մեկ տարվա ընթացքում, Վեհափառ Հայրապետի անմիշական հսկողության տակ, Մայր Արոռի միարանությունը, ներամփափած իր վաճական խաղաղ շրջանակի մեջ, անցկացրեց աղոթքի, աշխատանքի և ծառայության նվիրված մի տարի, ըստ վաճական կանոնադրության: Միշտ հնչեցին Մայր Արոռի զանգերը: Մայր Տաճարում անխափան պաշտվեց առավոտյան և երեկոյան ժամերգությունը, Ս. Թեմից հնչեց թանին կենաց բարողը, մեծահանդես շրով կատարվեցին ազգային-եկեղեցական տոները, ուխտագնացությունները և միարանությունը ապրեց հոգեւոր կյանքով և Մայր Արոռը դարձավ նշանակած կրոնական մի հաստատություն՝ ի Քրիստոս միարանած նոգեարկանների համար:

Անցնող տարվա ընթացքում Մայր Արոռ Ս. Էջմիածնի Հոգեւոր ձեմարանը, Վեհափառ Հայրապետի անմիշական հսկողության և առաջնորդության տակ, շնորհիվ ձեռք առված ուսումնա-դասսահարական անհրաժեշտ միջոցառությունների, առաջական ու դասախոսական կազմի բարեխիդն և ազնիվ աշխատանքի, բոլորեց կազմակերպված ու թեղմնավոր ուսումնական և մի տարի: Ճեմարանը ունի երեք դասարանական և երկու լսարանական բաժիններ: Ավելացել է ուսուողության թիվը: Հոգեւոր ձեմարանը Վե-

հափառ Հայրապետի սրտին մոտ և հարազարար մի հաստատություն է, որի գարզացման և ապագայի հնատ նորին Ս. Օծորյունը կապել է սրտառուց հույսեր և ակենալություններ: Վեհափառ Հայրապետի բարեհան արտօնությամբ Հոգեւոր ձեմարանը ունեցավ իր արժանավոր վերաբենուրը՝ հանձնին գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Արքահամայակի, հրավիրվեցին կարող դասախոսներ, որոնց բառու պատմական զիտուրյունների պրոֆ.-դոկտ. Կար Ղաֆարարյանը, պատմական զիտուրյունների բեկնածու դոցենտ Համեն Հարուրյունյանը, ֆիլոլոգիական զիտուրյունների բեկնածու դոցենտ Վարագ Առաքելյանը և ուրիշներ: Վեհափառ Հայրապետի զեկավարության տակ Հոգեւոր ձեմարանը տարեցտարի է՝ ավելի է մոտենում իր հարազար նկարագրի և հոգեւոր կոչման բարձրության:

«Էջմիածն» ամսագրի էջերից անբնական հնչեցին Վեհափառ Հայրապետի հայրենաշոնչ և հոգեշոնչ պատզամներն ու խառները, երա կենդանի ԽՈՍՔԸ ուղղված իր սիրելի հոտին, գրված Քրիստոնեական քաղցր շնչով, հայ զգայնությամբ, հայ մոտայնությամբ: «Էջմիածն» ամսագրում Վեհափառ Հայրապետի անմիշական ցուցմունքներով ու հրահանգներով, լայն տեղ է հատկացված նաև Մայր Արոռի միարանական կյանքին. Հոգեւոր ձեմարանին, մեր եկեղեցական կյանքին և բեմերի գործունեության: «Էջմիածն» ամսագիրը այսօր դարձել է հայ հավատացյալ մարդու սեղանի սիրելի գիրքը: Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ ամսագրի պապականակը այս տարի բարձրացվել է 3 000-ի, որից 1 200 օրինակը ուղարկվում է արտասահման, իսկ 1 800-ը սպառվում է մեր ներքին բեմերում: Բավարարելու համար օրավոր անող պահանջը, ծրագրված է հաջորդ տարի ամսագրի տպանակար հասցնել 5 000 օրինակի:

Վաճական, ուսումնա-կրթական աշխատանքից բացի, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, վերակազմակերպվեցին Շիրակի, Վրաստանի, Աղքահանի, Խորհրդանի, Խոր-նախիչևանի, Սոսկվայի մեր ներքին բեմերը: Կառարկեցին առաջնորդական փոփոխություններ, ընտրվեցին և հաստատվեցին նոր բեմական և եկեղեցական խորհուրդներ: Մայր Արոռի երիտասարդ միարաները շատ շնորհակալ աշխատանքներ շարունակեցին կատարել են և Մայր Արոռում՝ Վեհափառ Հայրապետի հրահանգներով և առաջնորդությամբ: Գերազույն Հոգեւոր Խորհրդանուրդը կառավարած գումարվեց Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ և զրայիկեց ազգային-եկեղեցական կյանքի

բազմարիվ հարցերով: Եր աշխատանքները խղճմառությամբ կատարեց նաև Վերսուլիք հանձնաժողովը:

Հունվարի 23-ին այժմյան Վեհարանում տեղի ունեցած Վեհարանի նոր շենքի պաշտոնական հանձնումը Վեհափառ Հայրապետին՝ Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առքերեր Հայ նկեղեցու գործերի խորհրդի հախազամուրյան կողմից:

Նոր Վեհարանի նորգուրյան և կամավորման ծրագրեր կազմվել են արդեռ և հոյս ունենք, որ Վեհափառ Հայրապետի գահակարության երրորդ տարեդարձը կտոնեն նոր Վեհարանում:

Այս բոլոր բազմազբաղ աշխատանքների մեջ, Վեհափառ Հայրապետի ամենօր ացուցմունքներով և հակոռությամբ, Վերաբորումն և շինարարական աշխատանքներու ավալում կերպով առաջ տարվեցին Մայր Արքունի, վաեմերում և եկեղեցիներում: 1956—1957 տարում կատարվեցին նետևյալ հիմնական շինարարական աշխատանքները.

1) Վերանորոգում և վերակառուցում թշնի Ս. Աստվածածին եկեղեցու և կից զանգակատան.

2) Սալահատակում Ս. էջմիածնի Մայր Տաճարի շուրջը.

3) Սալահատակում այժմյան Վեհարանի առջևի մայրի.

4) Սարմարապատում Ս. էջմիածնի Մայր Տաճարի հարավային մասի.

5) Կառուցման ընթացքի մեջ է գտնվում նոր Վեհարանի շրջապատի պարիսպը.

6) Կառուցում բարե բարդիքների և սահմանապետի Մայր Տաճարի և Սինոդի բակերի միջև.

7) Մայր Տաճարի հողամասում սկսվել են կոյողու անցկացման և շրջամատակարարման աշխատանքները:

Վեհափառ Հայրապետը, էլ ավելի կազմակերպելու համար մեր ներքին քեմերը և ամրապնդելու համար երանց կապը Մայր Արքունի հետ, մայիս—սեպտեմբեր ամիսներին կատարեց հովկապետական այցելություններ Շիրակի, Նոր-Նախիջևանի, Վրաստանի և Ադրբեյջանի քեմերը: Վեհափառ Հայրապետը ամեն տեղ բնդունքեց խանդավառութեն և շերմուրյամբ, արժանացավ փառակեղ և սրտագին բնդունքելության ոչ միայն հայ, այլ նաև ոուս, վրացի հավատացյալների և այլ կրոնական դպրանության հետևաղ մարդկանց կողմից:

Հովկապետական այս այցելությունների ժամանակ էլ ավելի կոփիլեցին և ամրացան հայ, ոուս, վրացի, ադրբեյջանցի ժողովությունների կուն միասնությունը, բարի դրացիությունն ու անհակտելի բարեկամուրյունը:

Մայր Արքունի և Հայրենի հարազատ կառավագուրյան փոխնարարերությունները Վեհափառ Հայրապետի գահակալության երկրորդ տարում էլ եղել են ավելի բան բարեկամական: Մայր Արքուն Ս. էջմիածնին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը իրենց պարտքը կատարել են հայ ժողովրդի և երա պետականության նորունկ գիտակցությամբ, բայց տերունական պատվերի «Տալ զիայսերն կայսեր և զԱստուծոյն Ամստուծոյն»:

Ամենայն Հայոց Հայրապետության, Վեհափառ Հայրապետի դիրքը մեր Հայրենի պետության հանդեպ եղել է և կիմի օրինական, ուղիղ և ազգիվ, ինչպես պարտ է լինել: Հայրենի կառավարության բարյացակամուրյունը և համակրանքը, բոլոր հարցերում, եղել են միշտ Վեհափառ Հայրապետի հետ և այդ մասին Վեհափառ Հայրապետը հանախ արտահայտվել է մեծ զոհուակուրյամբ և երախտագիտությամբ:

Մայր Արքուն հոգեոր-կրական, վաճական-վարչական, տեսասական և շինարարական աշխատանքների հետ միաժամանակ Վեհափառ Հայրապետի տեսադաշտից երբեք դրւու չեն մեացել Սփյուտի մեր եկեղեցական կյանքի կազմակերպարքան ծանր և պատասխանատու աշխատանքները, մեր քեմերի կենածին հարաբերության և սերտ համագործակցության հարցը Մայր Արքուն հետ:

Տարունակվեցին Մայր Արքունի և մեր նվիրապետական մյուս Արքուների սրտագին հարաբերություններն ու համագործակցությունը: Վեհափառ Հայրապետը և Մայր Արքուն Ս. էջմիածնին սրտագին ուրախությամբ և զոհուակուրյամբ ընդունեցին երուսաղեմում մարտի 20-ին կատարված պատրիարքական արժանակուր ընտրությունը՝ հանձնին ամենապատիվ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանի, երբ վերացվեց սզի սև բողոք Ս. Արքունի վրայից և վերջ գտավ սաղիմական տագնապը: Սակայն ցալ ի սիրու պետք է նշել, որ դեռ վերջնականապես չեն ցրվել հայ երուսաղեմի շինջ երկանամարի վրա ժամանակավորապես կուտակված քուտակված ամպերը:

Ի մեծ միիրարության և հուրախություն Վեհափառ Հայրապետի, Թուրքիայի հայոց գիտուն և ալեզարդ Մերազան Պատրիարքը՝ Նորին Ամենապատվություն Տ. Գարեգին արքեպիսկոպոսը, հայ բարձրաստիճան հոգեռականության Սիմեոն ծերունին, տիվ և գլուխ շարունակում է աշխատել ու արձել հավատով և տեսիլքով Հայ եկեղեցու միասնության և փառքի համար, ամեն կողմից:

ուելով իր սրտի խորքից բխած «կրոնաբարոյական և ընկերային նողակարումներ»-ը:

Հակառակ Վեհափառ Հայրապետի հաշտության առաջարկելու և խաղաղության հոգորդեցրին, Անքիլիասի Կարպիկոսության հարցը դեռ մինչև այսօր էլ մնամ է շլուժված, մեծ վիշտ պատճառելով Վեհափառ Հայրապետին: Անցեալ տարում էլ Վեհափառ Հայրապետի տեսակետն ու իդան է եղել՝ վերջ տալ Անքիլիասում ստեղծված անքազալի կացուրյան երկու կողմերի փոխադարձ զիշումներով, Կամիրելի եպիսկոպոսական մեղոնովի Համաձայնագրի ոգու պահպանմամբ:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Կենտրոնական վարչության համագույն պ. Ալեքս Մանուկյանը, իր փետրվար 23 թվակիր համակով, խնդել էր Վեհափառ Հայրապետի բարեհան արտօնությունը՝ իր կողմից անելու «միջամտություն մը, երկու հակառակորդ կողմերու միջև ստեղծելու բանակցության տրամադրություններ, գոյացնելու նպատակով հավանական հասկացողություն մը»: Վեհափառ Հայրապետը նր 20 մարտ թվակիր համակով տվեց եր օրենությունը պ. Ալեքս Մանուկյանին ճեռաբարկի հաջողության համար:

Այնունեմեկ Ամենապատիվ Տ. Գարեգին Պատրիարքը, Վեհափառ Հայրապետին ուղած իր 2 ապրիլ թվակիր համակով, ցանկություն էր հայտնում հաշտության մի շարք առաջարկերով աշխատանքի ձեռնարկել՝ «գետին պատրաստելու» և «ցավոտ խնդրին պատվավոր մեկ լուծումը ապահովելու համար»: Վեհափառ Հայրապետը տվեց եր համաձայնությունը Գարեգին Պատրիարքի առաջարկին:

Թայց պետք է այսուղ արձանագրել խորուն ափստանելով, որ այս բոլորը մնացին «ձայն բարբառոյ յանապատի»:

Այնուամենայնիվ Վեհափառ Հայրապետը, իր 13 հունիսի թվակիր համակով, պաշտոն հանձնեց Ամենապատիվ Տ. Գարեգին Պատրիարքին՝ շարունակելու այդ ուղղությամբ սկսված աշխատանքները:

Մայր Արոնի և Սփյուռքի մեր ազգային-եկեղեցական թեմերի փոխարարեցության հարցը Վեհափառ Հայրապետին շահագրգրուող կարեւոր խնդիրներից մեկն է եղել նաև այս տարի, որովհետեւ այդ փոխարարեցությամբ էլ միշտ բնորոշվել է մեր ազգային-եկեղեցական միասնությունը:

Սփյուռքի մեր թեմերի կազմակերպումը, նրանց խաղաղ ու համերաշխ գործունեությունը և սրտագիր կապը Մայր Արոնի հետ՝ Վեհափառ Հայրապետի ուշադրության կենտրոնումն է եղել միշտ: Վեհափառ Հայ-

րապետը սրտի խորուն գոհունակությամբ է հնակել առաջնորդների, հոգեու հովլիլ-ների կատարած շնորհակալ աշխատանքներին՝ թեմերի ազգային-եկեղեցական, մշակութային և բարեսարական կյանքի կազմակերպման և ղեկավարման հարցերում:

Սփյուռքի հայուրյունն էլ ապրում է կազմակերպման, հոգեու վերապարզեցների մի խոսուումնայից շրջան: Նաև թեմերում ջննվում են եկեղեցիներ՝ Միլանոյից մինչև Սիմբեյ, Խարբույից մինչև Հեռավոր Արևելի ծայրեցը, բացվում են նորանոր դպրոցներ, և մեր հայրենասեր և հավատացյալ ծողովուրդը ապրում է իր Մայր Եկեղեցու սիրով, Ս. Էջմիածնի խորհրդով և Հայրենիքի գաղափարով:

Հեռավոր Հյուսիսային Ամերիկայում, պերվանդ Աղաջանյանի նախագահությամբ և անձնությաց աշխատանքով, Մայր Արոնի տպարանի համար սկսված «արշավ»-ը արդեն հասել է 150 000 դրամարի: Մոտ ժամանակներու կգնվել է տպագրական մեթենաները և Մայր Արոնը կօժանի արդիական մի տպարանով, որը սրտագիր հվերը կլինի ամերիկայության:

Այս տարի էլ Մայր Արոնը սրտագիր հյուրասիրությամբ բնորությունը Սփյուռքից ուխտավորների խմբից:

Օգոստոս ամսի 15-ից մինչև 26-ը Մայր Արոնում եղան Գալուստ Կյուպահելյան հիմնարկության եներկայացուցիչներ սրբ Սիմբի Քեյքը և պարն եղանակ Ուրունյանը, Վեհափառ Հայրապետի հետ խորհրդակցելու համար Մայր Արոնի մեծանուն բարեւար հանգույցյալ Գալուստ Կյալպահելյանի՝ Ս. Էջմիածնի Մայր Մայր Տանարի համար արած կտակի մասին:

Ահա՝ Վեհափառ Հայրապետի գահակալության երկրորդ տարում կատարված աշխատանքների մի համառու թվում մասնաւոր կարեւոր է պատճառելու հշմարտապես հավատացյալ և հայրենասեր յուրաքանչյուր հայ մարդու, թե՝ Մայր Հայրենիքից ներս և թե՝ Սփյուռքում:

«Տարին, որ անցավ, — պատգամում է Վեհափառ Հայրապետը, — խաղաղության և շինուարան տարի մը եղավ Հայաստանյաց Եկեղեցինի համար և հատկապես Մայր Արոն Ս. Էջմիածնի համար: Հավատացե՛ք, որ Աստված Երեսը մեզ է դարձնեցած և իր լույսով կառաջնորդէ մեր քայլերը և մենք՝ բահանայք և ծողովուրդ, նոր հակատեղու խանդավառ, սկսած ենք շինել, շինել, ինչ որ անցյալի մեջ շար ձեռներ հանդցին, դարեր և դարեր շարունակ»: («Էջմիածն», 1957 թ. Ա. էջ 33):

եվ լուս, ՇինուիՄ է նա եվ ԱղոթուՄ,  
շինում է հոգեպես, հոգիներ է կետում  
Մայր Արռում և Հոգեոր ձեմարանում՝  
քստ իշում պատկերի և ճմանուրեան,  
շինում է մշակուրապես, շինում է տեսն-  
սապես և նոր լուս է իշեցնում մեր հին  
փաների վրա և նոր մարմին է տայիս լու-  
սապորչի երազին:

Շինարար Հայրապետ՝ նա շինում է ի՞ր  
ժողովրդի համար, շինում է Մայր Արռու  
Ս. էջմիածնի համար. շինում է հայոց  
պատմուրյան համար, ինչպես շինել են մեր  
լուսաբերկ հայրապետներ անցյալում:

Եվ նԱ ՇինուիՄ է ՄԻՒՅՆԱԿ... Բայց ոչ,  
ԱՍՏՎԱԾ ՆՐԱ ՀԵՏ է, հայու Աստվածը,  
Լուսավորչի, Սահակ-Մեւրոպի, Նարեկացու  
և Տարեացու, Աշտարակեցու և Խրիմյանի  
Աստվածը նրա հետ է, և երե Աստված նրա  
հետ է՝ «Ո՞չ իցէ մեզ հակառակ»:

Նրա հետ է մեր ժողովրդի սերն ու փստա-  
հուրյումք:

Ահա թէ իշու ամեն մի փորձ, ամեն մի  
ձեռնարկ, որ նպատակ ունի բոլացներու  
Մայր Արռոնի հմայքն ու Ամենայն Հայոց  
Հայրապետի հետինակուրյունը, յատինու  
նրա բարոյական ուժն ու հոգակուրյունը,  
սառնուրյուն բարովելու նրա դեմ և ժողո-  
վրդին մոխուցնելու՝ երեխայրական ահ-  
մրտուրյուն է և ազգավիաս գործողուրյուն,  
որը բխում է պղտոր ակունքներից և բնեա-  
նուու ոչինչ չունի հայ ժողովրդի գերազույն  
շահերի հետ:

Ս. էջմիածնին մեր ժողովրդի հոգեոր  
մայրն է, և «անպիտան ի հաւատս» մարդիկ  
միայն, ոչ մի սրբուրյուն չունեցող մարդիկ  
միայն կարող են ուրանալ և հարազատ  
մայր և ամեն սրբուրյուն:

Ս. էջմիածնին մեր ժողովրդի գոյուրյան  
և հավերժուրյան խորհրդանշանն է: Դրա  
համար Ս. էջՄԻԱՌՆԻ, ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ  
ՀԱՅՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ Դեմ ՈՒՂՂՎԱԾ ԱՄԵՆ  
ՄԻ ՀԱՐՎԱԾԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՏԻՆ Դեմ  
ՈՒՂՂՎԱԾ ՀԱՐՎԱԾԻ է, հայ ժողովրդի դեմ  
ուղղված հարված է, մեր Հայրենիքի, մեր  
ապագայի դեմ ուղղված հարված է:

Ս. էջմիածնին գարեւ շարունակ իր թեւի  
տակ առել, պանել ու պահպանել է մեր  
ժողովրդին, «որպէս հաս զազս իւր», և իր  
վերջին շուշառն է պատուի՝ փարաքերու  
համար հայուրյան վերերը: Այսիսին է  
նա նաև այսօր: Ուսիմն «Յո՞ւ երքամք»:

Լսենք մեր բանկագին մոր ձայնը և հավաք-  
վենք նրա շուրջ:

Արգարե, բովանդակ հայուրյան սրտազին  
համոզմուենք այն է, որ Վեհափառ Հայրա-  
պետի գահակալուրյան երկրորդ տարին ե-  
ղակ հաղրանակի մի տարի: «Ս. էջմիածնին  
այս պահուս պարզած պատկերը ամենեն ա-  
վելի լավատեսուրյուն կներշնչե բոլոր ահ-  
շահախնդիր հավատացյալերուն: Երիտա-  
սարդ, համակրելի ու կորովի Ամենայն Հա-  
յոց Հայրապետի՝ նորին Ս. Օծուրյուն Վագ-  
գեն Ա-ի առաջնորդուրյամբ և շնորհիվ Հայ-  
կական կառավարուրյան, անցնող տարին  
եղավ հաղրանակի տարի մը, հատկաբրշ-  
ված հոգեպարար հվանումներով:

...Վերջին հաշվով, ինչպես հայ ժողովր-  
դի նույնապես Հայաստանիայց եկեղեցին ա-  
պազան առավելաբար պիտի կերտվի Մայր  
Հոդի վրա: Այս իսկ պատճառով, մեծ երե-  
վանքով ու խանդավառուրյամբ պետք է դի-  
մավորել Ս. էջմիածնի ծաղկումն ու բարզ-  
վանումը» («Զարքոնե», 1957 թ., № 6):

«Ս. էջմիածնի սիրով վասփած, կանք ա-  
հա այստեղ, ու կմնանք այսպես, պատ-  
ճամուս է Վեհափառ Հայրապետը: Եղ  
ԱՆՑԻՆԵԼ ԱՐԱԶ ԱՅՍ ԱՆՑԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ  
ՀՈՎԻՏՏԵՆ, ԿՈՒԶԵՆՔ ՔԱՐ ՄԵԼ ԵՎՍ ԱՎԵԼՑԵՆԵԼ  
ԱՅՍ ՔԱԶՄԱԳԱՐՅԱՆ ՔԱՐԵՐՈՒԻՆ ՎՐՄ: ԿՈՒ-  
ԶԵՆՔ ՏՈՂ ՄԵԼ ԵՎՍ ՇԱՐԲՆԼ ՄԵՐ ԵՐԿԱՄԱԳԻԻ  
ՄԱԳԱՂԱՄԵՐՈՒԻՆ ՄԵԶ ԵՎ ՊՈՒՏ ՄԵՐ ԼՈՒՅՍ  
ԿԱԹԵՑԵՆԵԼ ԿՈՒԶԵՆՔ Ս. ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԱՆ-  
ՄՄ ԿԱՆԹԵՎՃԻ ՄԵԶ:»

...ՔԻՍՏՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆ ՍՈՒԻՐ էջ-  
ՄԻԱՌՆԻ ՎԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԿՅԱՆՔԻ  
ՆՊԱՏԱԿՆ ԽՍԿ է:

ԵՐԱԶԸ ԱՆԳԱՄ ՄԵԼ ԵՎՍ ԻՐԱԿԱՆՈՒԹՈՒՆ  
ԿԴԱՌՆԵԱ (Ամենայն Հայոց Հայրապետի  
Կաթողիկէ Ս. էջմիածնի տանի առթիվ Հու-  
նիսի 23-ի կիրակի օրը Մայր Տաճարում  
խոսած քարոզից. «էջմիածն», 1957 թ. №  
2):

Վեհափառ Հայրապետի գահակալուրյան  
երկրորդ տարեղարձի առթիվ բովանդակ  
հայուրյան սրտազին մալրանքն է, որ Աստ-  
ված «անպիտան ի հաւատս» և անսպառ  
պահի Մայր Արռու Ս. էջմիածնին՝ «Փայ-  
ծառուրին եկեղեցեաց մերոց և մանկանց  
սոցին մինչև ի կատարած աշխարհի», և եր-  
կար կյանք պարզի երա արժանինաիր Գա-  
հակալ, հանուց հայուրյան Հայր նորին Ս.  
Օծուրյուն Տ. Տ. Վագգեն Ս. Հայրապետին:

